

կարողութիւն և յաջողութիւն ամենայն բարի նպատակացն և ջանից, փայլեցուցանէ զսոսա լինել մշակ առանց ամօթոյ յայգի Տերուն, աղ համեմիչ յազդի մերում, և պայծառ լոյս հոգւով և մաօք կուրացելոց:

ԶՐԿԱՆՔ

Պ. ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԵԳԵԱՆՑ.

ԽՀԱԴՐՅ-ՇԵԱՆ ԵՐԱՐԱՐ ԱՀԱԴՐՅ.

Միմիայն ազգասիրութիւն քարոզողներ առանց ազգասիրական գործողութեան կամ թէ ազգասէր անուան տակ թագ կեցած ու ազգին վեաս տուողներ այո շատ գտանվում են մեր մէջ, բայց ազգասիրական գործք, որ իրապէս կատարելազործում են և կենդանացնում ամենայն ինչ սակաւներում են երևում: Սորա կենդանի ապացոյցը տեսնում ենք Զմիւռնացի Պ. Մարկոս Աղարէգեանցի վերայ, որ յառաջ Ռուսաստանում խմբագիր էր Առունկ Հայոց աշխարհի, ամսագրին: Սա անձանձիր քարոզում էր ազգասիրութիւն, ազգային ուսումնարանների յառաջազիմութիւն, յորդորում էր ամենին ազգի լուսաւորութեան համար շինաշյել ոչինչ, բայց ինքը ընդհակառակը յափշտակում է ազգի աղքատ ուսումնարանի սեպհականութիւնը: 1864 թուականում, երբ Շամախոյ Եռաջնորդ Հանդուցեալ Պանիկը Աղքաղիսկոպոսը ժողովարութիւն էր անում Տփիսիսում տեղւոյս հոգւոր դպրոցի համար, ազգասէր անւանեալ Աղարէգեանցն, ով զիտէ թէ ի՞նչ հնարներով, խնդրում է նրան և պարտք է առնում երկու ամիս ժամանակաւ ուսումնարանի համար ժողոված գումարից 150 ռուբլի, որոյ համար և տալիս է օրինաւոր մուրհակ, որն որ գտնվում է այժմ ևս Հոգաբարձութեանս գործոց մէջ: Պ. Աղարէգեանցն անվճար ժողովլիրա այս պարտքը՝ զնում է Կ. Պոլիս. երկար ժամանակ շտանալով նրանից այս ազգային գումարը, տեղւոյս Վիճա-

կաւոր Առաջնորդը և Հոգաբարձութիւնս քանի անդամ պահանջում է նորանից այս գրամի Կ. Պոլսոյ Գերապատիւ Պատրիարքի միջնորդութեամբ, բայց նա Աղարէգեանցն, ինչպէս արժանահաւատ աղբիրից իմացանք, փոխանակ զիջողութիւն կամ միջոց խնդրելոյ իրա պարտքն վճարելց համար, խզմանու հոգւով զանում է բոլորովին, յայտնելով թէ նա այս պարտքը, որպէս թէ վճարել է արգեն նցն իսկ Պանիկը Աղք Եպիսկոպոսին Զարմանալի՝ ստութիւն . . . : Մեր խորհուրդ կտայինք Պ. Աղարէգեանցին, որ նա, թէ յեւ յեւ աղքատութեան մեջ ևս լինէր, այնու ամենայնին յանձն չառնոցը մի այսպիսի տմարդութիւն և խաբէական գործ: բաւական էր, եթէ նա աղջուաբար խոստովանէր իրա նեղ վիճակը, մեք չնայելով ուսումնարանի զրութեանը՝ կարող էինք զիջողութիւն անել նրան: Բայց ուրանալ բոլորովին և խիզճը մեռնելով զըպարտել Հանդուցեալ Աղք Եպիսկոպոսին, ազգասիրի՝ գործ է թէ խաբերայի:

Հոգաբարձութիւնս խնդրում է Արքունու ամսագրոյ Խմբաղբութիւնիցդ հրատարակել Պ. Աղարէգեանցի այսօրինակ պարտազանցութիւնը ի փետութիւն բոլոր ազգայոց մերոց: Այս ծանուցման մի օրինակը ևս ուղարկուեցաւ Կ. Պոլսոյ Մասիս և Տփիսիսու Մեղաւ Հայաստանի օրագրաց Խմբաղիններին ի հրատարակութիւն:

ՀԱԴՐՅ-ԱՐՅ-ՀԱԴՐՅ- Ա. ՀԱԴՐՅ- ՀԱԴՐՅ- ՀԱԴՐՅ- ՀԱԴՐՅ-
ԳԱՀԱՐԴ ԹԱՐ- ՀԱՆԵԱՆԿ ՀԱԴՐՅ-
ՀԱԿԻ- ԱԼԵՍԻ ՀԱԴՐՅ-
ԱՄԵՐԻ ԱՂԵ- ԱՀԱ- ՀԱԴՐՅ-
ՀԱԴՐՅ- ԱՄԵՐԻ ՀԱԴՐՅ-
ԵՐԻ- ԱՄԵՐԻ ՀԱԴՐՅ-

Կ. 29 Նոյեմբեր 1874 թ:

Ի. Բ. Շահումյան:

(թէ մեզ անյայտ պատճառով ուշ սասցաք վերոյ հրատարակեալ զրութիւնը, բայց Հոգաբարձուաց թախանձազին խնդրանաց համար մանաւանդ ի սէր դաստիարակութեան և լուսաւորութեան

մերազնեայ մանկտւոյն՝ — որոյ համար փոխանակ առաւել քան զառաւելն նպաստամատոյց՝ ջանադիր և նախանձախնդիր յաւէտ կանդնելոյ՝ ընդհակառակն զրկանք հասուցած է յիշեալ ։ Եւ Պ. Աղարեգեանց՝ նորին սեպ հական մի գումարը 150 ռուբլեաց (քսան և երկու հատ Օսմանեան ոսկեոյ չափ) զլանալով վերադարձունել և հատուցանել, թողումք առկոսիքը, որով և յաւիտենական նախատանաց արժանանալ ունի, — զիջանք հաղորդել մեր սիրելի ազգայնոց՝ ի իրատ և ի զգուշութիւն այլոց):

ԹԱՏՐՈՆ ՄԵՐԱՋՆԵԱՑ ՈՒՍՏԱԴՊԱՑ

Ի ՄՈՍԿՈՎ.

ԽՈՅՔԱԴՐՈՒՆԵԱՆ ԱՐԱՐԱՊ ԽՀԱՅՔՐՈՅ.

Ամսոյս 18ին Մոսկվայի ուսանողները բաղաւուրութիւն ունեցան մի թատերական խաղարկութիւն ներկայացնելով, տեսնել տեղուցս բոլոր Հայերին միացած և ժողոված մի մարդասիրական գործի նպաստելու իրեանց նիւթական օժանդակութեամբ:

Խաղարկութիւնը Հայ և Մուսլիմութիւն էր: Հայկական Թատրոնի համար ընտրել էին ի Տէր հանգուցեալ Պաշեկթաշխանի Պահանջէ, ողբերգութիւնը: Ճշմարիտ է, այս ողբերգութեան մէջ հեղինակի բանաստեղծական քնարի նուրբ թերթը ազգումն Հայի ականջին ազգասիրութեան զացմանց քաղցր ձայներ, ինչ պէս և նորաբոլոր քերթուածների մէջ սակայն թեմնական արուեստի մի քանի էական պայմանները պահպանած ըսլինելով, ներկայացմունքը շատ գժուարութիւն ունէր: Այսու ամենայնիւ ուսանողների յօժար կամքը գժուարութիւնները յաղթել էր: զլանաւորապէս կատարեցին, ուսանողքիշկ Պ. Արամեան, Պահանջէի, գերը, ուսանող իրաւաբաններ Պ. Տէր Յովշաննէսեան, Արտաւազլինը և Պ. Մանուկեան, Զայրմայլինը:

Առուսական ներկայացման մէջ հասարակաց գործին նպաստելու համար մասնակից էին օրիորդ Սողոմէ Ստեփանեանը, և օրիորդ Լէնգոլդները: Աւանողները յայտնումն իւրեանց խորին և անկեղծ շնորհակալութիւնը յիշեալ օրիորդներին՝ նախ նոցա վերին սատիճանի ճարտար և հմուտ խաղի և երկրորդ՝ նոցա կամաւոր սպատրաստութեան համար:

Խաղարկութիւնը աւարտեցաւ երեկոյեան 10 ժամին և յետոյ սկսվեցաւ Պարահանդէս (Բալթ), որ տևեց մինչև երկու ժամը: Այստեղ ժողովված էին տեղուցս բոլոր Հայերը և բոլորի երեսին դրբոշմիած էին ուրախութեան և ներքին գոհունակութեան նշաններ:

Աւանողները պարտք էն համարում յատնելիւրեանց խորին յարգութիւնը և շնորհակալութիւնը նոցա, որովք բանիւ և գործով սատարեցին այս գործին, որ ձեռնարկված էր բարեգործական նպատակով, չքաւոր Հայ ուսանողներին հնար և միջոց տալու մոքով —, նախ Մեծ: Պ. Յովիսանեանին որ իւր այցելութեամբ և նշանաւոր նուիրատվութեամբ ցոյց տվեց իւր համակրութիւնը և ուշագրութիւնը գէպ ի Հայ ուսանողները: Մեծ Պ. Ստեփանեանի ընտանեաց, որոց եռանգուն ջանքով և նուիրատվութեամբ գործը սկսվեց և ի կատար հասաւ: և բոլորեցունց, որոնց համար թանկ ու նուիրական է Հայը, հայութիւնը և նոցա զարգացման նպատակով ձեռնարկված գործերը:

Նամակիս Ամազրոյդ էջերի մէջ տեղի տալ ինդրելով ամենախոնարհ յարգանգը,

ԱԿԱՏ

ՈՒՍՏԱԴՊ ՀԱՅ — ԲԱԿԻԿԱՅ:

Յ. Գ. Թատրոնից ստացած ամրող եկամուտն էր 715 ու գուրս հանելով 251 ու եղած ծախսը, յօգուտ չքաւոր ուսանողներին մնաց 464 ու:

25 Դէյտէնէլէ 1874 թ:

Է ԱԿԱՏ: